ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«20» նոյեմբերի 2020թ. N ՄՈ/441-2020

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 2-Ի N ՄՈ/160-2019 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Մեծամորի N 1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2020 թվականի նոյեմբերի 12-ի N 198, «Ամասիայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2020 թվականի նոյեմբերի 17-ի N 83 և «Նորավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2020 թվականի նոյեմբերի 12-ի N 39 գրությունները.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2019 թվականի մայիսի 2-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների խորհուրդների անվանական կազմերը հաստատելու մասին N ՄՈ/160-2019 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշմամբ հաստատված N 8 հավելվածի 5-րդ կետում «Պողոսյան Նոյեմզար» բառերը փոխարինել «Սարգսյան Քնարիկ» բառերով,

2) որոշմամբ հաստատված N 10 հավելվածի 8-րդ կետում վերահաստատել «Կարապետյան Մերի» բառերը,

3) որոշմամբ հաստատված N 36 հավելվածի 5-րդ կետում «Համբարձումյան Լիաննա» բառերը փոխարինել «Իշխանյան Ալիսա» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Մարզպետ՝ ***Հ.Մաթևոսյան***

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 20.11.2020 12:16:09 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230